**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | ուղղ.119 |
| Տիպ | Ուղղում |
| Ակտի տիպ | Incorporation (-till now) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2023.10.30-2023.11.12 Պաշտոնական հրապարակման օրը 10.11.2023 |

## ՈՒՂՂՈՒՄ

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 138-Ն որոշման մեջ տեղի են ունեցել վրիպակներ, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով, միաժամանակ, նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում նշված իրավական ակտերի պատշաճ ինկորպորացումն ապահովելու նպատակով, առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 165-Ն որոշման

1. 1-ին կետի 15-րդ ենթակետում «փոխանակման կետում առկա» բառերը փոխարինել «փոխանակման կետի դրամարկղում առկա» բառերով:
2. 1-ին կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերությունում

*«բ. «վարչական պատասխանատվության:» բառերից հետո լրացնելով «Համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:» նախադասությունը փոխարինելով «Համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկության որևիցե փոփոխության դեպքում այդ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում փոփոխված տեղեկությունը:» նախադասությունը:»*

բառերի փոխարեն կարդալ

*«բ. «վարչական պատասխանատվության:» բառերից հետո «Համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:» նախադասությունը փոխարինել «Համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկության որևիցե փոփոխության դեպքում այդ փոփոխության մասին տեղեկանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկին «փի-դի-էֆ» ֆորմատի ֆայլով ներկայացնել համապատասխան փոփոխված տեղեկությունը:» նախադասությամբ:*

**ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդ**

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 10 նոյեմբերի 2023 թվական:**